ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

(գիտական հոդվածների ժողովածու)

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

(գիտական հոդվածների ժողովածու)

Երևան
«ԱՍՈՂԻԿ»
2016

ՀՏԴ 159.923
ԳՄԴ 88.37
Ա 597

Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի գիտական խորհրդի երաշխավորմամբ

Գրախոս՝
հոգեբանական գիտությունների դոկտոր
ՌՈՒԲԵՆ ՆԱՂԴՅԱՆ

Գիտական խմբագիր՝
հոգեբանական գիտությունների թեկնածու
ՆԱՐԻՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա 597 **Անձի հոգեբանության տեսական և կիրառական հարցեր** (գիտական հոդվածների ժողովածու). - Եր.: «Ասողիկ» հրատ., 2016.- 280 էջ:

Սույն ժողովածուում ներկայացված են ԵՊՀ Անձի հոգեբանության ամբիոնի դասախոսների, ասպիրանտների և մագիստրոսների հոդվածները: Ժողովածուում ընդգրկվել են անձի հոգեբանության հիմնահարցերին վերաբերող տեսական և կիրառական բնույթի հոդվածներ: Դիտարկվում են անձի ձևավորման և կայացման գործում զարգացման, սոցիալական, մշակութային և էքզիստենցիալ խնդիրներ:

Հոդվածների ժողովածուն կարող է օգտակար լինել անձի հոգեբանության ոլորտով հետաքրքրված մասնագետների և ուսանողների համար:

ՀՏԴ 159.923
ԳՄԴ 88.37

ISBN 978-9939-50-308-0

© Երևանի պետական համալսարան, 2016
© Խաչատրյան Ն. (խմբ.), 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ 5

ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Նարինե Խաչատրյան
ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՅՍՕՐ. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ 9

Սվետլանա Հարությունյան
ՆԱՐԱՏԻՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ. ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ 16

ԱՆՁ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Լիլիթ Գարգրցյան
ՍԵՓԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԸՆԿԱԼՈՒՄՆ ՈՒ ԴՐԱ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՀԱՍՈՒՆՈՒԹՅԱՆ ՓՈՒԼՈՒՄ 33

Իրինա Խանամիրյան
ԾՆՈՂԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԱՑԻՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՎՐԱ 42

Էլեոնորա Զաքարյան, Մարինե Միքայելյան
ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԲԱԶՄԱԲՆՈՒՅԹ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԻՔՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ 49

Սոսե Խաչիբաբյան
ՍՏԵՂԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ 61

Մանե Տոնոյան
ԾԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ ՄԻՋԻՆ ՀԱՍՈՒՆՈՒԹՅԱՆ ՓՈՒԼՈՒՄ 68

Կարինե Հարությունյան
ՆԿԱՐԻ ԴԵՐԸ ԵՎ ՊԱՏԿԵՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ 77

Արմինե Հայրապետյան, Լիլիթ Գարգրցյան
ԿԱՊՎԱԾՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԻ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ 84

ԱՆՁ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Աննա Հակոբջանյան
ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՎԱՐՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ 97

Լիանա Սարգսյան, Սվետլանա Հարությունյան
ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉՆԵՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 113

Լիլիթ Ավետիսյան, Սոնա Մանուսյան
ԿԱՄԱՎՈՐԻ ՕԳՆՈՂԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ԱՆՁԻ ՆՈՒՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՈՒՄ 128
Քնարիկ Առաքելյան
ԱՆՁԻ ԶՈՀԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ 145
Մարիաննա Գևորգյան, Նարինե Խաչատրյան
ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՅՆ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ 153
Անժելա Աֆյան, Նարինե Խաչատրյան
ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՎԱՐՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 163

ԱՆՁ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Սոնա Մանուսյան
ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԸՄԲՌՆՈՒՄԸ 179
Նվարդ Գրիգորյան, Աննա Հակոբջանյան, Մերի Գրիգորյան
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՀԱՄՈԶՄՈՒՆՔՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՔԵՐ 193
Աստղիկ Սերոբյան
ԱՆՁՆԱՅԻՆ ԳԾԵՐ ԵՎ ԱՈՒՏՈԿԱՐԾՐԱՏԻՊԵՐ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԵՐԻ, ՀՈՒՅՆԵՐԻ ԵՎ ԱՍՈՐԻՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ 210
Անուշ Մկրտչյան
ԱՐԺԵՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ 227
Անի Մովսիսյան, Նարինե Խաչատրյան
ՈՐՈՇ ԱՆՁՆԱՅԻՆ ՓՈՓՈԽԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՏԱՐԲԵՐ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՈՒՄ ԱՆՑԱԾ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ 238

ԱՆՁ ԵՎ ԷՔԶԻՍՏԵՆՑԻԱԼ ԽՆԴԻՐՆԵՐ

Լուսինե Աղաբեկյան
ՄԱՀՎԱՆ ՀԵՏ ԲԱԽՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԷՔԶԻՍՏԵՆՑԻԱԼ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ 257
Նարինե Ադամյան, Իրինա Խանամիրյան
ԱՌՈՂՋԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՅՐԵՐԻ ԱՐԺԵԻՄԱՍՏԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 263
Կարինե Գրիգորյան
ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՀՎԱՆ ՎԱԽԻ ՖԵՆՈՄԵՆՈԼՈԳԻԱՆ. ՏԱՐԲԵՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 273

ԱՆՁՆԱՅԻՆ ԳԾԵՐ ԵՎ ԱՈՒՏՈԿԱՐԾՐԱՏԻՊԵՐ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԵՐԻ, ՀՈՒՅՆԵՐԻ ԵՎ ԱՍՈՐԻՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ

Ասպղիկ Սերոբյան

Ներածություն

Հայտնի է, որ ինքնության ձևավորումը և գործառույթները ենթարկվում են հասարակության գոյատևման և զարգացման որոշակի սոցիալ-քաղաքական, սոցիալ-տնտեսական, սոցիալ-հոգեբանական օրինաչափությունների: Չնայած այն մեծ հնարավորություններին, որոնք առաջ են գալիս տարբեր մշակույթների ներթափանցման և հաղորդակցման արդյունքում, միևնույն ժամանակ սրվում է ազգային նույնության և պատկանելության հարցը, մանավանդ, երբ մի ազգի ներկայացուցիչը համեմատվում է այլ ազգի ներկայացուցչի հետ: Հայաստանում, որն առավելապես մոնոէթնիկ է համարվում իր մշակութային պատկերով, այնուամենայնիվ, ապրում են ազգային փոքրամասնություններ, որոնք փորձում են պահպանել իրենց ինքնատիպությունը:

Այս հոդվածում ներկայացված են հայերի և որոշ ազգային փոքրամասնությունների ազգային ինքնության որոշ բաղկացուցիչների վերլուծմանն ուղղված սոցիալ-հոգեբանական ուսումնասիրության արդյունքները: Նախ քննարկվել են ինդիգեն հոգեբանության ձևավորման նախադրյալները և անձի վերաբերյալ հիմնական դրույթները, այնուհետև վերլուծվել են ազգային բնավորություն, ազգային կարծրատիպեր հասկացությունները և վերջում քննարկվել են հայերի, ասորիների, հույների անձնային գծերի, ինչպես նաև ինքնընկալման, աուտոկարծրատիպերի տարբերությունների և նմանությունների բացահայտմանն ուղղված հետազոտության արդյունքները:

Ինդիգեն հոգեբանություն

Հատկապես 20-րդ դարի երկրորդ կեսից հետո շատացել են էթնիկական կամ ազգային ինքնության վերաբերյալ հետազոտությունները, ստեղծվել են բազմաթիվ տեսություններ: Այդ տեսությունները կարելի է բաժանել երկու մեծ հակադիր խմբերի: Առաջին խմբի տեսություններն անձը դիտարկում է որպես ի ծնե տրված բնավորության կայուն գծերի և

հատկությունների համախումբ: Երկրորդ խմբի տեսությունները, որոնք կոչվում են նաև մշակութային կամ ինդիգեն տեսություններ, անձը և նրա մշակութային միջավայրը դիտարկում են միասին, իրար հետ փոխկապակցված [7, 10, 22]:

Այսպիսի փոփոխությունները որոշ չափով պայմանավորված են ժամանակակից անձի հոգեբանության մեջ բնավորության գծերի (դիսպոզիցիոնալ) տեսությունների և իրավիճակային տեսությունների ներկայացուցիչների միջև բանավեճի առկայությամբ: Համաձայն դիսպոզիցիոնալ տեսությունների՝ բնավորության գծերն ու դրանց դրսևորումները, անկախ միջավայրից, բոլոր մարդկանց համար ընդհանուր են [10]: Իրավիճակային տեսության ներկայացուցիչները կարծում են, որ մարդու վարքն ամբողջովին պայմանավորված է միջավայրով [10, 16]: Անձի կոգնիտիվ-աֆեկտային տեսության ներկայացուցիչները, հատկապես Վ. Միշելը, մերժում են բնավորության գծերի տեսանկյունից մարդու վարքի մեկնաբանումը (անձի կոգնիտիվ աֆեկտային տեսություն): Համաձայն Միշելի՝ անձի կայունությունը բացատրելու համար բնավորության գծերի վրա այդպիսի կենտրոնացվածությունը տեղ չի թողնում ուշադրություն դարձնելու այն կոնկրետ իրավիճակին, որում գործում է անձը: Անձի կոգնիտիվ-աֆեկտային տեսությունը կարևորում է ինչպես անձնային գծերը, այնպես էլ իրավիճակը, որում դրանք դրսևորվում են: Այսինքն՝ Միշելը հակված չէր ռադիկալ բիհեյվիորիզմին ու չէր պնդում, որ մարդու վարքը պայմանավորում է միմիայն իրավիճակը [22]:

Անձի հոգեբանության մեջ այսպիսի հեղաշրջումը հնարավոր դարձավ կոգնիտիվ տեսությունների զարգացման շնորհիվ: Այս շրջանակներում բնավորության/անձի գծերը սկսեցին դիտարկվել որպես նախատիպեր, այսինքն՝ տեղեկությունը կարգավորող նորմավորված կոգնիտիվ սխեմաներ: Նախատիպը գործում է կոգնիտիվ ստանդարտի նման. մենք ինքներս ենք ձևավորում այն հասկացությունները, թե ինչպիսին պետք է լինի շփվող կամ ընկերասեր մարդը: Նոր տեղեկությունը յուրացվում է՝ համաձայնեցվելով արդեն գոյություն ունեցող նախատիպի հետ: Համաձայն այս մոտեցման՝ բնավորության գծերն ազգային կարծրատիպերի նման հարկավոր է դիտարկել որպես ուրիշների կարծիքից և վերագրումներից առաջացած, այլ ոչ թե կայուն կառույցներ:

Միջմշակութային ուսումնասիրություններում առաջացան մոտեցումներ, համաձայն որոնց՝ անձը և մշակութային միջավայրը, այն մշակութային համատեքստը, որում ձևավորվում է անձը, անքակտելիորեն կապված են, ու անձնային տարբերությունները պայմանավորված են մշակույթով: Այս մոտեցումը կոչվեց մշակութային կամ ինդիգեն հոգեբանություն:

Ինդիգեն հոգեբանության ներկայացուցիչները կարծում են, որ համընդհանուր անձի մոդել գոյություն չունի, այսինքն՝ օրինակ, Մեքսիկայում ապրողն ու Չինաստանում ապրողը չեն կարող ունենալ միևնույն անձնային կառուցվածքը: Նրանց կարծիքով՝ մարդուն կարելի է հասկանալ միայն տվյալ մշակույթի համատեքստում, ուսումնասիրել անձի ձևավորման և կենսագործունեության օրինաչափությունները՝ համապատասխան մշակութային պայմաններին [9, 21]:

Մշակութային կամ ինդիգեն հոգեբանության տեսակետից՝ միջմշակութային հետազոտությունները կարելի է անցկացնել էմիկ և էթիկ մոտեցումներից ելնելով: Էմիկ մոտեցման ժամանակ փորձ է արվում երևույթներն ու դրանց փոխկապակցվածությունը դիտարկել տվյալ մշակույթին պատկանող մարդկանց տեսանկյունից: Այս մոտեցումն ուսումնասիրում է համակարգի վարքը ներսից, դիտարկում է մեկ մշակույթ, հետազոտական չափանիշները կապված են ներքին բնութագրիչների հետ: Էթիկ մոտեցման ժամանակ համակարգն ուսումնասիրվում է դրսից, դիտարկվում և համեմատվում են շատ մշակույթներ, հետազոտական չափանիշները համարվում են համընդհանուր [1, 2, 16]:

Ազգային բնավորություն

Յուրաքանչյուր մարդու ներաշխարհը յուրօրինակ է, սակայն այն գտնվում է նաև սոցիոմշակութային ֆենոմենների ազդեցության տակ: Անձի և մշակույթի փոխկապակցվածության առաջին լուրջ հետազոտությունները սկսվել են դեռևս 1930-ական թվականներին [4, 6, 8, 15]: Իր հետազոտությունների և դիտարկումների արդյունքում Ա. Կարդիները (A. Kardiner, 2008) ենթադրել է, որ յուրաքանչյուր մշակույթում կա անձի գերակշռող տիպ, և առաջարկել է «բազային անձ» հասկացությունը: Ա. Կարդիների մեկնաբանությամբ՝ բազային անձը կազմված է հակումներից, պատկերացումներից և այլ մարդկանց հետ հարաբերությունների ձևերից: Անձի բազային կառուցվածքը փոխանցվում է սերնդեսերունդ դաստիարակության միջոցով և ինչ-որ չափով որոշում է տվյալ ազգի ճակատագիրը: Ա. Կարդիները նաև ընդգծում էր, որ սոցիալական միջավայրի փոփոխությունը հանգեցնում է բազային անձի փոփոխության: Այդպիսի փոխակերպումներ լինում են, երբ մեծանում է շփումը հարևան ցեղերի հետ, կնքվում են միջցեղային ամուսնություններ և այլն [մեջբերվում է ըստ 3]:

Բազային անձի բացահայտման համար, որպես կանոն, օգտագործվում էին նկարագրողական մեթոդները կամ հետազոտողի անձնական

տպավորությունները, այլ ոչ թե վիճակագրական մեթոդները: Հետագայում «բազային անձ» հասկացությունը լրացվեց «մոդալային անձ» հասկացությամբ, որը հնարավոր էր ուսումնասիրել դիտման, կենսագրական տվյալների, հոգեբանական թեստավորման (հատկապես պրոյեկտիվ մեթոդիկաների) միջոցով [14, 15]:

Այսպիսով, մոդալային անձը համապատասխանում է համեմատաբար ամուր պահպանվող անձնային գծերին, որոնք առավել հաճախ են հանդիպում տվյալ հասարակության անդամների շրջանում: Հետևաբար, մշակույթի և անձի փոխազդեցության և փոխկապակցվածության հետազոտման տրամաբանական շարունակությունը դարձավ ազգային բնավորության ուսումնասիրությունը: Գիտնականների կարծիքով՝ ազգային բնավորությունը պատմականորեն զարգացած կայուն հոգեբանական հատկությունների ամբողջություն է, որը որոշում է այս կամ այն ազգի ներկայացուցչի վարքի ձևն ու հատկանշական գործողությունների ձևը: Ազգային բնավորությունն արտահայտվում է ազգի ներկայացուցիչների վերաբերմունքում սոցիալ-կենցաղային միջավայրին, շրջապատող աշխարհին, աշխատանքին, սեփական և ուրիշ էթնիկ համայնքներին [7, 20]:

Ակնհայտ է, որ էթնոսի բնավորությունը նրա առանձին ներկայացուցիչների բնավորությունների գումարը չէ, այլ յուրահատուկ գծերի ամբողջականությունը, որոնք առկա են տարբեր աստիճանի ու տարբեր համակցություններով ազգի ներկայացուցիչների մեծամասնության մոտ: Ինչպես նաև ընդունելի չէ որոշ հատկություններ դիտարկել որպես առանձին էթնիկ խմբերի մենաշնորհ: Յուրահատուկ են ոչ թե գծերը կամ դրանց գումարը, այլ կառուցվածքը, այսինքն՝ խոսքը ոչ թե հատկությունների ինչ-որ հավաքածուի, այլ դրանց արտահայտվածության աստիճանի ու ձևերի մասին է [7]:

Ազգային կարծրատիպեր

Ազգային կարծրատիպերը որևէ էթնոսի վերաբերյալ պարզեցված, սխեմավորված, հուզականորեն երանգավորված պատկերացումներն են, որոնք դյուրին կերպով տարածվում են նրա բոլոր ներկայացուցիչների վրա [19, 13]: Էթնիկ կարծրատիպերը սոցիալական կարծրատիպերի տեսակ են, որոնք հիմնականում դիտարկվում են որպես բացասական երևույթներ: Սակայն միարժեքորեն այդպես պնդելն այդքան էլ ճիշտ չի լինի: Կարծրատիպերը կարող են լինել ինչպես դրական, այնպես էլ բացասական: Ազգային կարծրատիպերը բաժանում են նաև աուտոկարծրատիպերի և հետերոկարծրատիպերի: Սեփական խմբին վերաբերող

կարծրատիպերը կոչվում են աուտոկարծրատիպեր, իսկ այլ խմբերին վերաբերողները՝ հետերոկարծրատիպեր: Աուտոկարծրատիպերը հիմնականում ունեն դրական բնույթ, և դրանց նպատակն ազգի ներկայացուցիչների հայրենասիրության զգացման դաստիարակումն ու պահպանումն է: Հետերոկարծրատիպերն ավելի քիչ դրական երանգավորում ունեն, և դրանց հիմնական ֆունկցիան այն է, որ անձը տարբերի սեփական և այլազգի ներկայացուցիչներին [1, 10, 19]:

Հայերի, ասորիների, հույների անձնային գծերի և աուտոկարծրատիպերի առանձնահատկությունների համեմատական վերլուծություն

Մեր հետազոտության ընթացքում փորձել ենք պարզել միևնույն մշակութային պայմաններում ապրող տարբեր ազգերի՝ հայերի և ՀՀ-ում ապրող էթնիկ փոքրամասնություններից՝ ասորիների ու հույների անձնային գծերի և աուտոկարծրատիպերի դրսևորման նմանություններն ու տարբերությունները: Միևնույն մշակութային պայմաններում ապրող տարբեր էթնիկ խմբերի ազգային Ես-կերպարի, անձնային հատկությունների տարբերությունների և նմանությունների բացահայտումը թույլ կտա հասկանալ, թե ազգային ինքնագիտակցության ձևավորման մեջ որքանով դեր ունեն էթնիկական նույնականության յուրատիպությունը և միևնույն մշակութային տարածքը:

Հետազոտության համար հայերի, հույների, և ասորիների ընտրությունը պայմանավորված է նրանով, որ նրանք հնագույն ազգերից են, անցյալում ապրել են միևնույն տարածամշակութային սահմաններում, իրենց պատմության ընթացքում ենթարկվել են բազմաթիվ քաղաքակրթական մշակութային ազդեցությունների, կորցրել են իրենց պետականությունը, սակայն պահպանել են ինքնանվանումը, ազգային սովորույթները, «մենքը» «ուրիշներից» տարբերելու մշակութային գնահատումները և չափորոշիչները:

Մեր հետազոտության նպատակը Հայաստանում ապրող ասորիների, հույների և հայերի ազգային անձնային ու ինքնընկալման առանձնահատկությունների դրսևորման տարբերությունները և առանձնահատկություններն ուսումնասիրելն է:

Հետազոտության ընտրանքը կազմել են 18-60 տարեկան հայ, ասորի և հույն ազգի ներկայացուցիչներ: Ըստ ազգային պատկանելության յուրաքանչյուր խմբում ներգրավվել է 50 հոգի: Հետևաբար, ընտրանքի ընդհանուր քանակը կազմել է 150 հոգի: Ընտրանքը ձևավորվել է այնպես,

որ յուրաքանչյուր ենթաընտրանքին հավասարաչափ ներկայացված լինեն կանայք (25 հոգի) և տղամարդիկ (25 հոգի): Մասնակիցները ՀՀ շրջաններից և Երևան քաղաքից էին, քանի որ ասորիների և հույների համեմատաբար մեծ համայնքների մեծ մասը մարզերում է և ոչ թե Երևան քաղաքում: Արդյունքների վրա միջավայրի ազդեցությունը բացառելու նպատակով հետազոտությանը մասնակցել են նաև ասորիների կամ հույների հետ նույն քաղաքում կամ գյուղում ապրող հայերը: Մասնակցում էին Արզնիում բնակվող ասորիները և հայերը, Ալավերդիում, Վանաձորում բնակվող հույները և հայերը, նաև կային հույներ, ասորիներ և հայեր Երևանից:

Հետազոտությունն անցկացվել է մի քանի փուլով՝ նախնական փուլ, առաջին փուլ, երկրորդ փուլ: Նախնական փուլն իրականացվել է կիսակառուցվածքային զրույցի մեթոդի միջոցով, առաջին փուլում իրականացվել է թեստավորում, երկրորդում՝ հարցում: Թեստավորումն ուղղված էր բացահայտելու երեք ազգերի ներկայացուցիչների անձնային գծերի դրսևորման առանձնահատկությունները: Հարցման միջոցով ուսումնասիրվել են հայերի, ասորիների և հույների ազգային աուտոկարծրատիպերը:

Հետազոտության նախնական փուլ

Հետազոտության նախնական փուլում կիրառվել է զրույցի մեթոդը, որի նպատակն էր պարզել ազգային ինքնության արտահայտվածությունն անձի կառուցվածքում: Այս պատճառով հարցերն ուղղված էին բացահայտելու, թե որքանով են հայերը, հույները և ասորիները տեղեկացված իրենց ազգային ավանդույթների, սովորույթների, պատմության մասին, որտեղից են հիմնականում այդ մասին իմացել և ինչքանով են պահպանում դրանք: Հետազոտության հիմնական փուլից առաջ զրույցի մեթոդի կիրառումն ուներ ևս մեկ գործառույթ, այն է՝արթնացնել ազգային պատկանելության զգացումը: Զրույցի ընթացքում հնչած առանցքային հարցերից էին. ա) ի՞նչ է Ձեզ համար հայ (ասորի, հույն) լինելը, բ) դրա հետ կապված ի՞նչ զգացողություններ, մտքեր ունեք, գ) ի՞նչ գիտեք Ձեր ազգի սովորությունների, ավանդույթների, պատմության, ծագման մասին, դ) ինչպե՞ս եք իմացել այդ ամենի մասին, ե) երբևէ մտածե՞լ եք կամ ցանկացե՞լ եք լինել այլ ազգի ներկայացուցիչ:

Հայերի, հույների և ասորիների մեծամասնության համար իրենց ազգի ներկայացուցիչ լինելն առաջացնում է հպարտության զգացում և շատ է կարևորվում իրենց համար: Այս կարծիքին է ասորիների հիմնական

մասը: Հույների մի մասը չգիտի, թե ինչ է իր համար հույն լինելը և որքանով է այն իր համար կարևոր: Ի տարբերություն հույների, որոնց մեծ մասն իր մայրենի լեզուն չգիտեր, սակայն մի մասը հաճախում էր հունարենի դասընթացների ու փորձում էր ավելին իմանալ հույների մասին, ասորիների մեջ նկատվում էր իրենց ազգային ավանդույթների պահպանում և փոխանցում սերունդներին, նրանք բոլորը խոսում էին իրենց մայրենի լեզվով, դպրոցի մի մասն ասորական թեքումով էր, կապեր ունեին այլ երկրներում ապրող ասորիների հետ, հպարտանում էին, որ ասորի են: Հայերի համար հայ լինելն առաջացնում էր ոչ միայն հպարտության զգացում, այլև մի մասն իրեն համարում էր արժեքների և ավանդույթների պահպանող, իսկ մի մասի կարծիքով էլ ճակատագրի բերումով է, որ իրենք հայ են:

Հետազոտությանը մասնակցած բոլոր ասորիները ծանոթ էին իրենց սովորույթներին, ավանդույթներին, ծագմանը, պատմությանը, ամեն ինչ անում էին, որպեսզի պահպանեն դրանք ու փոխանցեն մյուս սերունդներին, նույնիսկ ափսոսանք էին ապրում, երբ երիտասարդների մի մասը դրանք չէր պահպանում: Ասորիներն իրենց ազգային ավանդույթների պատմության, ծագման մասին իմացել են հիմնականում ծնողներից և պատմությունից: Հույների մեծ մասը նույնպես ծանոթ էր իր ազգային սովորույթներին, պատմությանը և աշխատում էր պահպանել ու փոխանցել հաջորդ սերունդներին: Նրանք այդ ամենի մասին իմացել են՝ այցելելով Հունաստան և շփվելով այնտեղի հույների հետ, ինչպես նաև՝ գրքերից, իրենց մեծերից, ծնողներից: Սակայն կային հույներ, ովքեր այդքան էլ ծանոթ չէին այդ ամենին: Հայերի մեծ մասը նույնպես ծանոթ էր իրենց ազգային սովորույթներին, պատմությանը, ծագմանը և աշխատում էր պահպանել դրանք, սակայն կային մարդիկ, որոնք հայկական ավանդույթներին որոշ չափով էին ծանոթ, և կային մարդիկ, որոնք չէին ցանկանում պահպանել դրանք (նրանց մի մասը որոշ չափով ծանոթ էր, իսկ մի մասը ծանոթ չէր): Հայերն իրենց պատմության, ծագման մասին իմացել են հիմնականում գրքերից, ծնողներից, դպրոցից:

Հայերը, հույները և ասորիներն իրենց ազգի մյուս ներկայացուցիչներին վերաբերվում են լավ, բարեկամաբար, հետաքրքրությամբ և հոգատարությամբ, ու կցանկային, որ իրենց երեխաներն էլ նույն կերպ վերաբերվեն իրենց ազգին, պահպանեն և փոխանցեն ազգային արժեքներն ու ավանդույթները (հայերի մի մասը կցանկանար, որ իր երեխաները ոչ բոլոր ավանդույթներն ու սովորույթները պահպանեն, քանի որ ժամանակները փոխվում են, սովորույթները՝ նույնպես): Մեր հետազոտությանը մասնակցած այս երեք խմբերի ներկայացուցիչների գերակշռող մասը չէր

ցանկանա լինել այլ ազգի ներկայացուցիչ, միայն հույներից և ասորիներից 5-ական հոգի կուզենային հայ լինել, իսկ հայերից 7 հոգի՝ եվրոպացի:

Այսպիսով՝ զրույցի արդյունքում պարզեցինք, որ մեր ընտրանքը կազմող հայերի, հույների, ասորիների մեծամասնությունն իրեն զգում և դրսևորում է որպես իր ազգի ներկայացուցիչ, հիմնականում գիտի իր ազգային ավանդույթների, սովորույթների, ծագման, պատմության մասին, աշխատում է պահպանել դրանք ու փոխանցել հաջորդ սերունդներին:

Հետազոտության առաջին փուլ

Մեթոդի նկարագրություն

Թեստավորման ընթացքում կիրառել ենք Անձի հնգագործոն հարցարանը ճապոնացի գիտնական Խ. Տսույիի վերամշակմամբ: Հարցարանում ընդհանուր 150 արտահայտություն է, որոնց գնահատականները խմբավորվում են 25 երկբևեռային առաջնային բաղադրիչների, որոնցից յուրաքանչյուրը կազմված է 6 արտահայտությունից, և դրանք էլ, իրենց հերթին, խմբավորվում են 5 ընդհանրացված կամ երկրորդային գործոններում [17]:

Հետազոտության հետևանքով ստացված արդյունքները մշակելու համար կիրառվել է միագործոն դիսպերսիոն վերլուծության մեթոդը (One-Way Anova)՝ օգտագործելով վիճակագրական վերլուծությունների համար նախատեսված SPSS և R համակարգչային փաթեթները: Մինչ դիսպերսիոն վերլուծություն կատարելը կիրառվել է *Լևինի դիսպերսիաների միապարրության չափանիշը*: Դիսպերսիոն վերլուծության արդյունքները հաշվի են առնվում այն ժամանակ, երբ համաձայն Լևինի չափանիշի՝ համեմատվող խմբերի դիսպերսիաների միջև վիճակագրորեն նշանակալի կապեր չեն հայտնաբերվում: Կիրառվել է նաև *Դունկանի թեստը*, որը ցույց է տալիս, թե համեմատվող երեք խմբերից որոնք են միմյանցից տարբերվում [5, 11, 12]:

Արդյունքների վերլուծություն և քննարկում

Աղյուսակ 1-ում ներկայացված են «Անձի հնգագործոն հարցարանի» անցկացումից հետո ստացված արդյունքները:

Աղյուսակ 1. **Անձի հնգագործոն հարցարանի երկրորդային գործոնների և առաջնային բաղադրիչների միջին արժեքներն ու ստանդարտ շեղումները**

Անձնային գծեր		Հայեր		Ասորիներ		Հույներ	
		M	S_x	M	S_x	M	S_x
Էքստրավերսիա	ակտիվ	12	2.3	11	3.01	10	2.85
	գերիշխող	11	2.9	11	2.58	11	3.05
	շփվող	11	3.43	12	3.27	11	3.12
	տպավորություններ որոնող	10	3.23	10	2.32	10	3.21
	ուշադրություն գրավող	10	2.98	11	1.97	10	2.45
	∑	54	9.21	55	10.06	52	10.47
Կապվածություն	ջերմ	11	2.99	12	3.52	12	2.49
	համագործակցող	11	2.76	12	3.01	11	2.39
	վստահող	8	3.33	11	2.59	9	2.84
	դիմացինին հասկացող	12	2.42	13	1.75	11	2.47
	ուրիշներին հարգող	12	2.11	12	1.79	11	1.81
	∑	54	7.89	60	10.26	54	8.8
Վերահսկողություն	կոկիկ	12	2.57	14	1.55	12	3.83
	համառ	12	2.89	12	2.43	12	3.2
	պատասխանատու	12	2.2	13	2.53	12	3.4
	ինքնավերահսկող	10	2.76	10	2.66	10	2.29
	հեռատես	11	2.69	12	3.02	11	3.28
	∑	57	8.03	61	8.48	57	11.75
Հուզականություն	տագնապող	11	3.28	10	2.93	10	3.33
	լարվող	9	2.84	10	3.31	8	2.66
	ընկճվող	10	2.65	11	2.26	9	2.81
	ինքնաքննադատ	9	2.51	9	2.52	9	2.06
	հուզականորեն անկայուն	11	2.86	9	3.28	8	3.11
	∑	50	10.87	49	11.38	44	8.74
Ինքնաբուխ/բաց միտք	հետաքրքրասեր	11	2.97	11	2.29	10	3.07
	երազկոտ	11	3.25	9	2.41	8	3.05
	արտիստիկ	13	2.11	12	2.39	11	3.62
	զգայուն	11	2.74	10	2.92	10	2.22
	ճկուն	10	2.32	8	2.54	8	2.68
	∑	56	9.72	50	7.73	47	8.36

Դիսպերսիոն վերլուծությունը ցույց տվեց, որ հայերի, ասորիների, հույների միջև վիճակագրորեն նշանակալի տարբերություններ կան *կապվածություն F=7.08 (df=2, p=0.001)*, *հուզականություն F=4.47 (df=2, p=0.001)*, *ինքնաբուխ F=9.79 (df=2, p=0.001)* անձնային երկրորդային գործոնների միջև: Ընդ որում՝ Դունկանի թեստի անցկացումից հետո պարզ է դառնում, որ ըստ նշանակալիության 5% աստիճանի՝ հայերը տարբերվում են հույներից և ասորիներից ավելի վառ արտահայտված ինքնաբուխ գործոնով, ասորիները մյուս երկուսից՝ արտահայտված կապվածության գործոնով, իսկ հույները մյուս երկուսից՝ քիչ արտահայտված հուզականության գործոնով:

Կապվածություն երկրորդային գործոնը, որն առավել վառ է արտահայտված ասորիների մեջ, պայմանավորված է որոշ առաջնային գործոնների տարբերությամբ: Օրինակ, ինչպես երևում է Աղյուսակ 1-ից, վիճակագրորեն նշանակալի տարբերություններ են նկատվում վստահող *F=12.09 (df=2, p=0.001)* առաջնային գործոնով, որն ասորիների մեջ ավելի արտահայտված է, ի տարբերություն հայերի և հույների, և դիմացինին հասկացող *F=8.70 (df=2, p=0.001)* առաջնային գործոնով, որի պարագայում նշանակալի տարբերություն է նկատվում ասորիների և հույների միջև (համաձայն Դունկանի թեստի արդյունքների): Կապվածության մնացած առաջնային գործոնների միջև վիճակագրորեն նշանակալի տարբերություններ չեն հայտնաբերվել, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ այդ հատկություններով հայերը, ասորիները և հույներն ունեն նմանություն (ջերմությունը, համագործակցումը, ըմբռնումը, հարգանքն ուրիշների նկատմամբ):

Հայերին և ասորիներին բնորոշ են նաև *հուզականություն* գործոնի բարձր արժեքները, ի տարբերություն հույների: Այս գործոնի որոշ առաջնային գործոնների միջև ևս գտնվել են նշանակալի տարբերություններ: Այսպես, օրինակ, տարբերություններ են գտնվել լարվող *F=3.86 (df=2, p=0.02)*, ընկճվող *F=5.29 (df=2, p=0.001)*, հուզական անկայուն *F=12.91 (df=2, p=0.001)* գործոնների միջև: Համաձայն Դունկանի թեստի արդյունքների՝ ըստ նշանակալիության 5% աստիճանի՝ հայերը տարբերվում են հույներից և ասորիներից հուզական լաբիլությամբ, իսկ ասորիները տարբերվում են հույներից լարվածությամբ և դեպրեսիվությամբ: Հուզականության մնացած առաջնային գործոններով (տագնապայնություն, ինքնաքննադատություն) տարբերություններ չեն արտահայտվել երեք ազգերի միջև:

Հայերն *ինքնաբուխ/բաց միտք* երկրորդային գործոնով տարբերվում են ասորիներից և հույներից: Սա նշանակում է, որ հայերն առավել

ներգրավված են կյանքի տարբեր ոլորտներում, նրանք հեշտությամբ սովորում, գլուխ են հանում նոր բաներից, սակայն բավականաչափ լրջությամբ չեն վերաբերվում համակարգված գործունեությանը: Հայերի տարբերությունն ասորիներից և հույներից այս գործոնով պայմանավորված է որոշ առաջնային գործոնների տարբերությամբ. համաձայն Դունկանի թեստի՝ ըստ նշանակալիության 5% աստիճանի առաջնային գործոնների՝ հայերը տարբերվում են հույներից և ասորիներից երազկոտի *F=7.96 (df=2, p=0.001)*, ճկունի *F=3.97 (df=2, p=0.021)* համեմատաբար բարձր աստիճանով: Ինքնաբուխի այլ առաջնային գործոններով (հետաքրքրասեր, զգայուն) տարբերություններ չեն գտնվել:

Էքստրավերսիա և *վերահսկողություն* երկրորդային գործոնների միջև վիճակագրորեն նշանակալի տարբերություններ չեն հայտնաբերվել, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ այդ հատկություններով երեք ազգերը նման են: Միայն նշանակալի տարբերություն է նկատվել էքստրավերսիա երկրորդային գործոնի առաջնային բաղադրիչներից ակտիվի *F=3.12 (df=2, p=0.049)* միջև, որով, ըստ Դունկանի թեստի, հայերն ու հույները տարբերվում են (5% նշանակալիության աստիճան):

Արդյունքների միջին արժեքների և ստանդարտ շեղումների վերլուծությունից պարզ է դառնում, թե որ անձնային մակրոգործոններն ունեն արտահայտվածության որոշ տարբերություններ հայերի, ասորիների, հույների անձնային կառուցվածքի պրոֆիլում: Այսպես, օրինակ, հայերի մեջ 5 գործոնից վառ են արտահայտված վերահսկումը և խաղաղասիրությունը, ասորիների մեջ՝ վերահսկումը և կապվածությունը, իսկ հույների մեջ՝ վերահսկումը: Այս համադրությունը թույլ է տալիս ասել, որ երեք ազգերի պարագայում անձի ձևավորման և սոցիալացման գործընթացում մեծ դեր ունեն վարքի վերահսկմանն ուղղված ազդեցությունները: Հաշվի առնելով այն, որ, մի կողմից՝ վերահսկման գործոնի պարագայում միջինների համեմատության մեջ դուրս չբերվեցին նշանակալի տարբերություններ, իսկ մյուս կողմից, այն, որ երեք ազգերի՝ անձի կառուցվածքում վերահսկումն առավել վառ է արտահայտված, կարելի է ենթադրել, որ տվյալ անձնային գործոնի արտահայտվածությունը հայերի, ասորիների և հույների մեջ պայմանավորված է հենց միևնույն սոցիալ-մշակութային ազդեցություններով և արժեքներով: Այս եզրակացությունը կարելի է նաև հաստատել այն փաստով, որ Մեծ հնգյակի հետազոտությունները ցույց են տալիս, որ *վերահսկողություն* գործոնն առավել շատ է պայմանավորված ձեռքբերովի գործոններով: Ինչ վերաբերում է էքստրավերսիա գործոնին, պետք է ասել, որ այս անձնային գործոնի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այն բնածին հիմք ունի և պայմանավորված է գլխուղեղի նեյրոկարգավորիչ աշխատանքի օրինաչափություններով [18]:

Հետազոտության երկրորդ փուլ

Մեթոդի նկարագրություն

Հետազոտության երկրորդ փուլում օգտագործվել է էթնիկական խմբերի ներկայացուցիչների ազգային աուտոկարծրատիպերը բացահայտող հարցարանը: Հարցարանի նպատակն է բացահայտել հետազոտության մասնակիցների պատկերացումները կամ աուտոկարծրատիպերն իրենց ազգի նկատմամբ [15]: Այն բաղկացած է 74 բնութագրիչներից: Հարցարանը կազմվել է՝ հիմնվելով Տ. Ստեֆանենկոյի և նրա գործընկերների կողմից մշակված ազգային կարծրատիպերի հիմնական ընդհանուր տարակարգերի և դրանց ենթատարակարգերի վրա: Մեր հետազոտության ընթացքում մասնակիցներն իրենց առաջարկվող հատկությունները պետք է գնահատեին՝ ցույց տալով, թե ինչ չափով է այն արտահայտված իրենց ազգի կամ էթնիկ խմբի մոտ: Գնահատումը կատարվում էր 1-5 միավորանոց սանդղակով, որտեղ 1-ը քիչ բնորոշն էր, իսկ 5-ը՝ շատ բնորոշ:

Արդյունքների վերլուծություն և քննարկում

Աղյուսակ 2-ում ներկայացված են այն հատկությունները, որոնք հայերը, ասորիները և հույները համարել են ամենաշատ ու ամենաքիչ բնորոշն իրենց ազգին:

Աղյուսակ 2. **Հայերին, հույներին և ասորիներին ամենաշատ ու ամենաքիչ բնորոշ աուտոկարծրատիպերը**

Հայեր	Ասորիներ	Հույներ
Շատ բնորոշ	**Շատ բնորոշ**	**Շատ բնորոշ**
աշխատասիրություն*	հայրենասիրություն	հայրենասիրություն
հոգատար վերաբերմունք ընտանիքի նկատմամբ	սեփական կոլեկտիվին նվիրվածություն	հարգանք այլ ազգերի նկատմամբ**
հոգատար վերաբերմունք երեխաների նկատմամբ	հոգատար վերաբերմունք ընտանիքի նկատմամբ	կրոնասիրություն
Հյուրասիրություն	հոգատար վերաբերմունք երեխաների նկատմամբ	հոգատար վերաբերմունք ընտանիքի նկատմամբ
Արժանապատվություն	ընկերասիրություն	հոգատար վերաբերմունք երեխաների նկատմամբ
բարձր ինքնագնահատական**	շփվողականություն**	ընկերասիրություն
Հպարտություն	հյուրասիրություն	հյուրասիրություն
հաջողության ձգտում	ակտիվություն	արժանապատվություն

Քննադատություն	Կոլեկտիվիզմ	Տնտեսող
	պատասխանատվություն	Ազնվություն
	ազատասիրություն	ազատասիրություն
Քիչ բնորոշ	Քիչ բնորոշ	Քիչ բնորոշ
Անտարբերություն	թշնամություն «ուրիշ» ազգի նկատմամբ	դաժանություն
Դաժանություն	անտարբերություն	ալարկոտություն
անշահախնդիր վերաբերմունք մարդկանց	Չարություն	թշնամություն «ուրիշ» ազգի նկատմամբ
կոլեկտիվիզմ**	դաժանություն	անտարբերություն
	ներփակվածություն	ագրեսիվություն
	Ժլատություն	Չարություն
	վախկոտություն	կոպտություն**
		ստախոսություն
		եսասիրություն
		Ժլատություն
		վախկոտություն

**p≤ 0.01; *p ≤ 0.001

Միագործոնային դիսպերսիոն վերլուծությունը ցույց տվեց, որ հայերի, ասորիների և հույների միջև ազգային աուտոկարծրատիպային հատկությունների մեծ մասի միջև վիճակագրորեն նշանակալի տարբերություններ չկան: Համադրելով շատ բնորոշ և քիչ բնորոշ հատկությունները, որոնցով հայերը, ասորիները և հույները բնութագրել են իրենց (Աղյուսակ 2), պարզ է դառնում, որ հետազոտության մասնակից երեք էթնիկ խմբերին առավել բնորոշ են հատկություններ, որոնք արտահայտում են միջանձնային հարաբերություններում նրանց հոգատար վերաբերմունքը, հատկապես իրենց անմիջական շրջապատին (օրինակ՝ հոգատար վերաբերմունքը ընտանիքի, երեխաների նկատմամբ, անտարբերության, դաժանության բացակայությունը): Աղյուսակից երևում է նաև, որ ասորիները և հույներն իրենց աուտոկարծրատիպերում ունեն ավելի շատ նմանություններ հայերի համեմատ: Օրինակ, նշվում են հատկություններ, որոնք ցույց են տալիս «ուրիշի» հետ հարաբերություններում հանդուրժողական վերաբերմունք (շատ բնորոշներից՝ հայրենասիրություն, ընկերասիրություն, իսկ քիչ բնորոշներից՝ թշնամություն «ուրիշ» ազգի նկատմամբ), ինչպես նաև հատկություններ, որոնք ցույց են տալիս արիություն և այլ դրական հատկություններ (շատ բնորոշներից՝ ազատասիրություն, քիչ բնորոշներից՝ վախկոտություն, չարություն, ժլատություն):

Սակայն վերլուծության արդյունքում դուրս են բերվել որոշ տարբերություններ ևս: Նշենք այն հատկությունները, որոնց դեպքում տարբերությունները երեք ազգերի միջև նշանակալի են եղել:

Երեք ազգերի միջև շատ և քիչ բնորոշ աուտոկարծրատիպերի (Աղյուսակ 2) տարբերությունները պարզելու համար իրականացրել ենք դիսպերսիոն վերլուծություն: Նշենք այն տարբերությունները, որոնցով յուրաքանչյուր ազգային խումբ տարբերվում է մյուս երկուսից: Հույների համար առավել նշանակալի տարբերություններ են դուրս բերվել այնպիսի աուտոկարծրատիպերում, որոնք արտահայտում են ուրիշի նկատմամբ դրական վերաբերմունք (օրինակ՝ հարգանք այլ ազգերի նկատմամբ *F=15.99 (df=2, p=0.001),* կոպտության քիչ արտահայտվածությունը *F=23.14 (df=2, p=0.001):* Ասորիների պարագայում առավել նշանակալի տարբերություն է դուրս բերվել շփվողականության աուտոկարծրատիպի համար *F=21.3 (df=2, p=0.001):* Հայերի պարագայում նշանակալի տարբերություններ են դուրս բերվել աշխատասիրության *F=4.72 (df=2, p=0.01),* բարձր ինքնագնահատականի *F=14.31 (df=2, p=0.001)* աուտոկարծրատիպերի, ինչպես նաև հայերին քիչ բնորոշ կոլեկտիվիզմի *F=52.31 (df=2, p=0.001)* համար:

Վերլուծելով աուտոկարծրատիպերի նմանություններն ու տարբերությունները՝ կարելի է ասել, որ այս երեք էթնիկ խմբերի միջև հիմնականում դիտվում են նմանություններ, սակայն նմանություններն ասորիների և հույների միջև ավելի շատ է, քան հայերի: Ասորիների ու հույների աուտոկարծրատիպային նմանություններն ավելի շատ էին, քան տարբերությունները: Հայերի մեջ առավել վառ են արտահայտված ինդիվիդուալիստական աուտոկարծրատիպերը, իսկ ասորիների և հույների մեջ առավել շատ են հանդիպում աուտոկարծրատիպեր, որոնք ցույց են տալիս ավելի հանդուրժող և բաց վերաբերմունք ուրիշներին: Ասորիների և հույների աուտոկարծրատիպերում ուրիշի նկատմամբ արտահայտված վերաբերմունքի նմանությունը կարելի է մեկնաբանել այն փաստով, որ լինելով ազգային փոքրամասնություն՝ նրանք ստիպված են եղել իրենց կենսագործունեության ընթացքում առնչվել և իրենց «մաշկի վրա զգալ» «ուրիշի» հետ հարաբերության փորձը, որի արդյունքում ձևավորվել են նմանատիպ ինքնընկալման առանձնահատկություններ: Իսկ այն, որ ասորիների և հույների մեջ ուրիշի նկատմամբ աուտոկարծրատիպերում գերակշռում են հանդուրժողական վերաբերմունք արտահայտող հատկություններ, կարելի է բացատրել նրանով, որ «ուրիշի», տվյալ պարագայում՝ հայերի կողմից, իրենց կենսագործունեության մեջ նրանք չեն հանդիպել անհանդուրժողական վերաբերմունքի, այլ պարագայում հավանական կլիներ, որ ասորիների և

հույների մեջ արտահայտվեին չհանդուրժող հատկություններ պարունակող աուտոկարծրատիպեր:

Եզրակացություններ

Մեր ուսումնասիրության միջոցով փորձեցինք վերլուծել նմանությունները և տարբերությունները երեք ազգերի միջև՝ անդրադառնալով նրանց՝ ա) անձնային գծերին, որոնք համարվում են անձի կառուցվածքի առավել կայուն բնութագրերը, բ) աուտոկարծրատիպերին, որոնք ձևավորվում են սոցիալական ճանաչողության՝ ինքնագնահատման, ինքնակատեգորիզացման, ուրիշների հետ սեփական ազգին համեմատելու, ինչպես նաև կենսափորձի ամփոփման արդյունքում: Ընդհանրացնելով մեր հետազոտության արդյունքները՝ կարող ենք դուրս բերել հետևյալ եզրակացությունները.

1. Համադրելով անձնային հինգ գործոնները՝ հայերի, ասորիների և հույների անձնային կառուցվածքի պրոֆիլում դուրս են բերվել տարբերություններ. հայերի մեջ վառ են արտահայտված վերահսկողությունը և ինքնաբուխ լինելը, ասորիների մեջ՝ վերահսկողությունը և կապվածությունը, իսկ հույների մեջ՝ վերահսկողությունը և առավել քիչ են արտահայտված հուզականությունը և ինքնաբուխ լինելը: Համեմատելով հինգ գործոնները երեք ազգերի ներկայացուցիչների միջև՝ դուրս է բերվել, որ հայերը տարբերվում են հույներից ու ասորիներից ավելի վառ արտահայտված ինքնաբուխ գործոնով, ասորիները մյուս երկուսից՝ արտահայտված կապվածության գործոնով, իսկ հույները մյուս երկուսից՝ քիչ արտահայտված հուզականության գործոնով:
2. Հայերի, հույների և ասորիների աուտոկարծրատիպերում նմանությունները կապված են այն հատկությունների հետ, որոնք արտահայտում են միջանձնային հարաբերություններում նրանց հոգատար վերաբերմունքը, հատկապես իրենց անմիջական շրջապատին՝ ընտանիքին և հարազատներին: Ասորիները և հույներն ունեն ավելի շատ նմանություններ իրենց աուտոկարծրատիպերում հայերի համեմատ, մասնավորապես, այդ նմանություններն արտահայտվում են «ուրիշի» հետ հարաբերություններում հանդուրժող վերաբերմունքով, ինչպես նաև հատկություններ, որոնք ցույց են տալիս արիություն, քաջություն: Հայերը, ի տարբերություն ասորիների և հույների, իրենց աուտոկարծրատիպերում տարբերվում են աշխատասիրությամբ, ինչպես նաև ինդիվիդուալիստական աուտոկարծրատիպերով (բարձր ինքնագնահատական, հպարտություն, հաջողության ձգտում):

3. Համադրելով երեք ազգերի ներկայացուցիչների կայուն գծերի և աուտոկարծրատիպերի առանձնահատկությունները՝ երևում է, որ նրանք նման են վարքի կառավարման և հույզերի վերահսկման առանձնահատկություններով, ինչպես նաև մտերիմ մարդկանց նկատմամբ նվիրվածությամբ, ուշադրությամբ և հոգատարությամբ: Այս նմանությունները պայմանավորված են առավել շատ քաղաքակրթական և սոցիալ-մշակութային միևնույն պայմաններում այս երեք ազգերի ապրելու և գոյատևելու փաստով: Տարբերությունների առկայությունն էլ, մեր կարծիքով, պայմանավորված է երեք ազգերին հատուկ ենթամշակութային առանձնահատկություններով:

Հետազոտության սահմանափակումները և ուսումնասիրման հետագա հնարավոր ուղղությունները

Հաշվի առնելով այն արդյունքները, որոնք ստացվել են այս հետազոտության ընթացքում, այնուամենայնիվ, պետք է նշել, որ հետազոտությունը համապարփակ չէ, և կան որոշ հարցեր, որոնք կարող են նոր ուղղություն տալ նմանատիպ ուսումնասիրությունների համար: Նախ՝ նշենք, որ հետազոտությունն իրականացվել է նույն մշակութային միջավայրում, և չեն ուսումնասիրվել ու համեմատվել այլ սոցիալ-մշակութային միջավայրում ապրող հայերը, ասորիներն ու հույները: Նաև նշենք, որ էթնիկական աուտոկարծրատիպերի ուսումնասիրությունը կատարվել է միայն հատկությունների գնահատմամբ, և չեն ուսումնասիրվել դրանց ընկալման և մեկնաբանման տարբերություններն ազգային ենթամշակույթից կախված: Եվ վերջապես, հետաքրքիր կլինի նաև դիտարկել միևնույն սոցիալ-մշակութային տարածքում ապրող ազգերի հետերոկարծրատիպերը, որոնց ուսումնասիրման անհրաժեշտությունը կարող է բխել արդյունավետ միջմշակութային հաղորդակցմանն ուղղված ծրագրերի իրականացման պահանջից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Арутюнян, Ю., Дробижева, Л., Сусоколов, А.** *Этносоциология:* Учебное пособие для вузов, М., Аспект Пресс, 1998.
2. **Берри, Дж.В. и др**. *Кросс-культурная психология. Исследования и применение*, Харьков: Изд-во Гуманитарный центр, 2007.
3. **Бромлей, Ю.** *Очерки теории этноса*, М., Издательство ЛКИ, 2008.

4. **Грушевицкая, Т., Попков, В., Садохин, А.** *Основы межкультурной коммуникации:* Учебник для вузов, М., ЮНИТИ-ДАНА, 2002. Հասանելի է http://www.countries.ru/library/intercult/mkk.htm
5. **Ермолаев, О.** *Математическая статистика для психологов:* Учебник, М., Флинта, 2004.
6. ***Кадырова, Г.*** *Грани взаимодействия культуры и личности*, Известия Уральского государственного университета, 2007, N 51, с. 55-59.
7. **Крысько, В.** *Этническая психология*. Учебное пособие, М., Изд. Академия, 2008.
8. **Либин, А.** *Дифференциалная психология: На пересечении европейских, российских и американских традиций*, М., Смысл, Изд. Центр Академия, 2004.
9. **Мацумото, Д.** *Психология и культура*, СПб, ЕВРОЗНАК, 2002.
10. **Наследов, А.** *SPSS: Компьютерный анализ данных в психологии и социальных науках,* СПб, Питер, 2005.
11. **Наследов, А.** *Математические методы психологического исследования. Анализ и интерпретация данных,* Учебное пособие, СПб, Речь, 2006.
12. *Психосемантический анализ этнических стереотипов: лики толерантности и нетерпимости*, под общей редакцией А.Г. Асмолова, М., 2000. Հասանելի է http://www.tolerance.ru/biblio/ps_analiz/0.html
13. **Стефаненко, Т.** *Этнопсихология*, М., Институт психологии РАН, Академический проект, 1999.
14. **Стефаненко, Т.** *Этнопсихология: практикум*, Учебное пособие для студентов вузов, М., Аспект Пресс, 2006.
15. **Сурманидзе, Л.** *Культура современные эмпирико исследовательские тенденции.* Հասանելի է http://anthropology.ru/ru/texts/surmanidze/mannt_24.html
16. **Хонигман, Дж.** Подходы. *Личность, культура, этнос: современная психологическая антропология*, Под общей ред. А. А. Белика. М., Смысл, 2001, с. 60-83.
17. **Хромов, А.** *Пятифакторный опросник личности,* Учебно-методическое пособие, Курган, Изд-во Курганского гос. Университета, 2000.
18. **Чернявская, Ю.** *Народная культура и национальные традиции*, Учебно-методическое пособие, Минск, 1997.
19. **Шмелев, А.** *Психодиагностика личностных черт*, СПб., Речь, 2002.
20. **Verónica, B. M., Shigehiro, O.** Culture and Personality, in O. John, R. Robins & L.Pervin (eds), *Handbook of Personality*: *Theory and Research*, New York, London, The Guilford Press, 2008, pp. 542-567.
21. **Steven, J., Emma, E.** Personality: The Universal and the Culturally Specific, *Annual Review of Psychology,* 60, 2009, pp. 369-94.
22. **Mischel, W., Shoda, Y., Ayduk, O.** *Introduction to Personality: Toward an Integrative Science of the Person,* Wiley Global Education, 2007.